ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ПУБЛИКАЦИИ

ՀԱԿՈԲ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ԿՏԱԿԸ

ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Լ. Ս. ԽԱՉԻԿՅԱՆ

1966 թ. հունվար-մարտ ամիսներին Հորգանանում և Լիբանանում գիտական շրջագայություն կատարելիս ծանոթացանք Երուսաղեմի հայոց պատրիարքության ու Զմմառի հայոց վանքի ձեռագրատներում պահվող հայերեն գրչագրերի հարուստ հավաքածուներին։ Այդ հաստատությունների վարիչները ամեն դյուրություն ստեղծեցին մեզ համար համեմատաբար կարճ ժամանակամիջոցում մեզ հետաքրքրող ձեռագրերից զգալի քանակությամբ ընդօրինակություններ ու միկրոպատճեններ կատարելու, և մենք վերադարձանք գիտական գործուղումից բերելով հայ միջնադարյան մատենագրության տարբեր բնագավառներին վերաբերող ուշագրավ նյութեր, որոնք, բնտ մեծի մասին, ոգտագործվելու և հրատարակվելու են համապատասխան մասնագետների կողմից՝ մեր գիտական պարբերականներում և առանձին գիտական աշխատությունների մեջ։

Բերած նյութերի շարքում իր բովանդակությամբ կարևոր նշանակություն ունի Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի շրջաբերական մի կոնդակը՝ իր կողմից «Կտակ» կոչված, որի միակ ընդօրինակությունը պահպանվել է Երուսաղեմի մատենադարանի № 2864 ձեռագրում։

Մի քանի խոսք այդ ուշագրավ փաստաթղթի նշանակության ու գրության հանգամանքների մասին։

* *

Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը բեղմնավոր իր գործունեությամբ առանձնահատուկ տեղ է գրավում XVII դարի էջմիածնի կաթողիկոսների շարքում։ 1655 թ. ապրիլի 8-ին օծվելով Ամենայն Հայոց կաթողիկոս և ավելի քան 25 տարի գահակալելով (մահացել է 1680 թ. օգոստոսի 2-ին Կ. Պոլսում), նա առավել չափով, քան իր գործունյա նախորդները՝ Մովսես Խոտանանցին և Փիլիպպոս Աղրակեցին, ծրագրված գործունեություն ծավալեց էջմիածնի վանքի հիմքերն ամրապնդելու, նոր կալվածքներ ձեռք բերելու, ջրանցքներ ու ջրավազաններ, ինչպես նաև վանական ու տնտեսական շենքեր կառուցելու գծով[1]*։ Պատմագիտական նորագույն ուսումնասիրություններում արվատական էջեր են գրվում Հակոբ Ջուղայեցու մասին, համարելով նրան նաև հայ ազատագրական շարժման ոահվիրա։ Նրա գործունեության այս բնագավառը լուսաբանելու համար մեջ բերվող վավերագրերը կարոտ են մանրակրկիտ քննության. սակայն ինչ արդյունքներ էլ ստացվելու լինեն այդ քննությունից, Հակոբ Ջուղայեցին, անտարակույս, չի գիջի իր դիրքերը որպես մի գործիչ, որ Մ. Օրմանյանի խոսքերով ասած՝ «Իր մտադրությունը կսևեռե ոչ միայն կրոնական և կրթական բարեկարգությանց վրա, այլ և ուշադրություն կդարձնե ազգին ապագային վրա. և անոր կենցաղական ու քաղաքական վիճակն ալ իր ջանքերուն առարկա կրնե. և դուրսեն հովանավորություններով ու նյութական օգնություններով կխորհի ազգին անկյալ կացությունը բարձրացնել և արկանյալ վիճակը երջանկացնել»*[2]*։*

Հակոբ Ջուղայեցու «Կտակը» (կոչվում է նաև «Գիր օրհնութեան և նամակ պահպանութեան») մի կարևոր սկզբնաղբյուր է, որ լույս է սփռում ոչ միայն Հակոբ Ջուղայեցու արդյունաշատ գործունեության տարբեր կողմերի վրա, այլև հնարավորություն է ընձեռում ծանոթանալու Ամենայն

---

* *Պարտք ենք համարում խորին շնորհակալություն հայտնել անվանի բանասեր Նորայր Եպիսկոպոս Պողարյանին, որը սիրալիր կերպով մեր ուշադրությունը սևեռեց այդ ձեռագրի վրա։*

1 *Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 104—105, 197—200։ «Ջաքարիա սարկաւագի Պատմագրութիւն», հատ. երկրորդ, 1870, էջ 62, 91։*

2 *Մ. Օրմանյան, Ազգապատում, Բ հատոր, Գ գիրք, Պեյրութ, 1960, էջ 2618—2619։*

Հայոց կաթողիկոսության տնտեսական ու քաղաքական դիրքերն ամրապնդելու նպատակով լուսամիտ կաթողիկոսի մշակած արմատական բարեփոխումներ կատարելու ծրագրերի հետ։

Իր «Կտակը» կամ շրջաբերական կոնդակը Հակոբ Ջուղայեցին հասցեագրել է «ընդ ոլորտս տիեզերաց» «ցիր ու ցան եղեալ» հայ ժողովրդի հոգևոր ու աշխարհիկ պետերին։

Թռուցիկ մի ակնարկ նետելով Հայոց պատմության տարբեր շրջանների վրա ու համառոտակի անդրադառնալով Արշակունյաց, Բագրատունյաց ու Ռուբինյանց տիրապետության շրջանների անցուդարձերին, Ջուղայեցին հանգում է այն եզրակացության, որ հայ եկեղեցու տնտեսական բարգավաճ վիճակի ու նյութական բարեկեցության հուսալի պատվարը միշտ էլ եղել է աշխարհիկ իշխանությունը։ «Որպես մարմինն է կառավարիչ հոգոյն և հոգին մարմնովն կատարէ զկամս աստուծոյ և թողութիւն մեղաց և զկատարումն ամենայն բարեկարգութեանց, նոյնպէս և հոգևորական գործ և եկեղեցական կարգ և սահման՝ մարմնաւոր իշխանութեամբ յառաջանայ»,— գրում է նա։

Ջուղայեցին հիշում է երանելի այն ժամանակները, երբ Բագրատունի թագավորների բարեգործությամբ Հայաստանում կառուցվեցին բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ, երբ «ոչ էր պակաս տուն հայրապետանոցի, քան զտուն թագաւորացն»։ Սակայն նա ապրում էր մի ժամանակաշրջանում, երբ երկու մասի բզկտված Հայաստանը հեծում էր թուրք և պարսիկ տիրապետողների ծանր լծի տակ. չկային հայ թագավորներ ու իշխաններ, որոնց հովանու ներքո բարգավաճ վիճակ ստեղծվեր հայ եկեղեցու համար։

Վշտալի ու ծանր այս պայմաններում, «ի ներքոյ իշխանութեան տաճկաց՝ երբեմն հեշտութեամբ, երբեմն նեղութեամբ, երբեմն հարստութեամբ և երբեմն աղքատութեամբ, և այսպէս փոփոխմամբ» են անցկացրել իրենց օրերը Ամենայն Հայոց կաթողիկոսները, որոնց մեջ եղել են նաև ապիկար ու տգետ մարդիկ։ Իր «Կտակի» մի զգալի մասը Ջուղայեցին նվիրում է XVII դարի սկզբներին գահակալած Դավիթ, Մելքիսեթ և Սահակ կաթողիկոսներին, թվարկում է նրանց վատաշվեր գործերը, այդ մասին հաղորդելով նաև ուշագրավ նոր տեղեկություններ։ Այնուհետև նա դրվատական պատմությունն է հյուսում իրեն նախորդող Մովսես ու Փիլիպպոս կաթողիկոսների. հայտնում է, որ Մովսեսը «նորոգեաց սուրբ աթոռն յամենայն դիմաց ... եթէ հոգևոր կարգօք՝ վարդապետօք, դպրաշանօք և աշակերտեալ մանկտօք, սուրբ եկեղեցւոյն բազմազուն զարդիւք և սրբութեան անօթիւք, նոյնպէս մարմնաւորօք՝ ընչիւք և ապրանօք, վարօք և վաստակօք»։

Շատ ավելի մանրամասնորեն Ջուղայեցին շարադրում է իր գործունեության դրվագները որպես Փիլիպպոս կաթողիկոսի աթոռակալ, իսկ այնուհետև՝ որպես Ամենայն Հայոց կաթողիկոս։ Սիմեոն Երևանցին՝ «Ջամբռում» ու Զաքարիա Քանաքեռցին իր «Պատմության» մեջ մանրամասն տվյալներ են գրանցել Էջմիածնի վանքում և այլ վայրերում Հակոբ Ջուղայեցու կատարած շինարարական ձեռնարկների, Մայր աթոռի կալվածքներն ընդարձակելու և գործունեության այլ կողմերի մասին։ Ջուղայեցին, սակայն, լրացումներ է կատարում. «Եւ յորժամ,— գրում է նա.— Շահ-Սոֆի թագաւորն եկն ի վերայ Երևանայ բերդին՝ Յօշականայ մլքին Բ. (2) դանկ և եկսն ախեալ էին տեառն Փիլիպպոսին և դանկ ու կէսն գրաւեցեալ. ի ժամանակս տեառն Փիլիպպոսի Աղչուց վանուց մուլքն ես էի գնեալ, Ծոփանիսոյ մուլքն և Սոլաքայ Գ. (3) դանկն...։ Յօշականայ զրաւն և մնացեալն այլ գնեցի»։ Այլուստ հայտնի չէ Աղչուց վանք, Ծոպանիս (Բյուրականի մոտ) և Սոլաք (Կոտայքում) գյուղերի մուլքը XVII դարում Էջմիածնի վանքին պատկանելու փաստը։ Շատ ավելի կարևոր է Վաղարշապատ գյուղի մուլքը Երևանի խաների կողմից բռնագրավված լինելու և մեծ ջանքերի շնորհիվ շահական հրովարտակով կրկին Էջմիածնի վրա հաստատվելու պատմությունը, որ շարադրում է իր «Կտակի» մեջ Հակոբ Ջուղայեցին։ «Բ. (2) տարի,— գրում է նա,— բազում աշխատութեամբ, ղեզերեցայ ի դրունս մեծամեծաց, մինչ տէր լիացաւ և քաղցրացոյց զսիրտ թագաւորին, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին վերստին շնորհեաց սուրբ աթոռոյն»։ «Կտակի» մեջ տվյալներ կան նաև անշարժ այլ կալվածքներ ձեռք բերելու և Էջմիածնի տնտեսության բարգավաճման նպատակով ձեռնարկված շինարարական աշխատանքների մասին. «Գեղի մուլք և այգիք վախմ եմ հաստատեալ սուրբ աթոռոյն, նոյնպէս և այլոց մուլք և այգիք եմ գնեալ, բաղանիք եմ վախմ ճարեալ, զրամ բազում եմ խարճեալ և ջուր բերեալ, որ այլեայլ անուն ասեն՝ հայոց լեզուաւն աճակուզայ (իմա՝ ագուգայ), թուրքի լեզուաւն՝ քարեզ, իսկ պարսիցն՝ ղանաթ. այն ջրոյն ներքեն ծակ եմ արարեալ, ի նման եւս զոյ վաստակ»,— գրում է Ջուղայեցին[3]։

3 Հակոբ Ջուղայեցու կառուցել տված քանքանների («զետնափոր ջուր») և ջրամբարների մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Ս. Երևանցին իր մեծարժեք «Ջամբռ»-ում (տե՛ս էջ 197—200)։

«Կտակի» բուն բովանդակությունը բացահայտվում է ընդարձակ այս նախաբանից հետո, որ գրավում է 19 ձեռագիր էջից բաղկացած փաստաթղթի 13 էջը։ Էջմիածնի վանական տնտեսության և կաթողիկոսական աթոռի համար համեմատաբար բարվոք վիճակ ստեղծելու նպատակով իր և իր նախորդների կատարած աշխատանքը ներկայացնելուց հետո, Հակոբ Ջուղայեցին ուղղակի հայտարարում է. «Եթէ սուրբ էջմիածնայ գէլուրի (իմա՛ հասույթի) և դրամի հրամանն ի ձեռն սնագլխի եղնի, փոքր ինչ ժամանակաց յետոյ սուրբ աթոռն աւեր տեսէք»։

Տնտեսական կայուն և բարվոք վիճակ ստեղծելու մտահոգությամբ Ջուղայեցին առաջարկում է սահմանափակել կաթողիկոսի իրավունքները և բարեկարգել աթոռի տնտեսության վարչությունը՝ ստեղծելով մի նոր մարմին՝ «դոլվաթաւոր երեսփոխանաց» գլխավորությամբ։

Դիմելով հայ ժողովրդի հոգևոր և մարմնավոր առաջնորդներին, Ջուղայեցին աղաչում է իրագործել իր կտակը, և այսուհետև կաթողիկոս օծելիս՝ հշտել նրա իրավունքներն ու պարտականությունները հետևյալ կերպ. կաթողիկոսն ինքնագլուխ իրավունք պետք է ունենա տնօրինելու նվիրակությունների և այլ դրամական հասույթների ընդհանուր գումարի մեկ-հինգերորդ մասը միայն, իսկ անշարժ կալվածքներից (մլքերից) ստացվող եկամուտի մեկ-տասներորդը։ Մյուս՝ մեծ մասը Մայր աթոռի անկապտելի ստացվածքն է համարվելու և տնօրինվելու է նոր ստեղծվելիք վարչության կողմից, որի կազմի մեջ լինելու են՝ «գործօքն պարկեշտ, ինքն համեստ և մարդասէր» մի աշխարհական — «երեսփոխան», նրա «խոստովանահայրը» — մի հոգևորական, և մի «դաւթար դրող», այսինքն՝ հաշվապահ։ «Դրամի պահելն, աւելցնելն և շահեցուցանելն ի ձեռն Երեսփոխանին է», նրա ձեռներեցությամբ ու գլխավորությամբ աթոռի հասույթները պետք է օգտագործվեն նոր կալվածքներ ձեռք բերելու, շինարարական օգտակար նոր գործեր կատարելու և այլ նպատակներով։

Պարզ ու որոշ պետք է լինեն նաև այս «երեսփոխան դոլվաթաւորի» իրավունքները, նա «զինչ որ առնէ գիտութեամբ կաթողիկոսին լինի, իսկ թէ կաթողիկոսն այլ տեղ լինի գնացեալ՝ գիտութեամբ աթոռակալին եղնի, զի ծածուկ բան չանէ»։

Տարին մեկ անգամ կաթողիկոսը, իր խորհրդականների հետ միասին, պետք է ժողով գումարի, պարզելու համար, թե «այս տարւոյս մուտն ինչ է և ելն ինչ է»։

Հակոբ Ջուղայեցու եկեղեցական բարեկարգության այս ծրագրում նախատեսված են նաև այլ կետեր։ Կաթողիկոսը պարտավորված պետք է լինի «գլխաւոր բան և գործ» լինելու դեպքում եկեղեցական ժողով գումարել՝ հեղինակավոր առաջնորդների և գիտուն վարդապետների մասնակցությամբ։ Էջմիածնում նոր կառուցումներ կատարելը կամ հին շինությունները քանդելը նույնպես կատարվելու է ժողովի կողմից հավանության արժանանալուց հետո։ Ի վերջո, կաթողիկոսները պարտավոր են միշտ շեն պահել աթոռի դպրատունը (հոգևոր ճեմարանը) և դասատունը (դպրոցը), «զի այն է օգուտ օրինաց և հաւատոյ և պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ»։

Ստույգ չգիտենք, թե երբ է գրել իր «Կտակը» Հակոբ Ջուղայեցին։ Մի հատվածում նա հայտնում է, որ բարեկարգությունների իր ծրագրի մասին նա առիթ է ունեցել զրուցելու Սպահանի (Նոր Ջուղայի) «դոլվաթաւորաց» հետ՝ «Կտակի» գրությունից 18 տարի առաջ։

Հայտնի է, որ Իրանի շահից իր կաթողիկոսության հաստատման հրովարտակը ստանալու, «Վաղարշապատ գյուղը կրկին էջմիածնին վերադարձնելու և ապահովման այլ արտոնություններ ձեռք բերելու համար, կաթողիկոս օծվելուց հետո, Ջուղայեցին մեկնել է Սպահան և, ինչպես ինքն է հայտնում կոնդակում, 2 տարի մնացել այնտեղ («Բ տարի բազում աշխատութեամբ ոեզերեցայ ի դրունս մեծամեծաց»)։

Մատենադարանի արխիվային բաժնում պահպանվել են Շահ-Աբբաս Բ-ի 2 հրովարտակները՝ տրված Հակոբ կաթողիկոսին հիջրայի 1069 թ. Ջումագի II ամսի 24-ին, որ համապատասխանում է մեր թվականության 1659 թ. մարտի 19-ին։ Հրովարտակներից մեկում Հակոբ կաթողիկոսի անունով վերահաստատվում է էջմիածնի մեկ զութանի ապահովությունը (մուաֆությունը), որ տրված է եղել Փիլիպպոս կաթողիկոսին, իսկ մյուս հրովարտակով՝ երկրի բոլոր նահանգներում անարգել հրթեկության իրավունք է շնորհվում էջմիածնի նվիրակներին[4]։ Ըստ այդմ Հակոբ կաթողիկոսը Սպահանում իր գործերն ավարտել է 1659 թ. գարնանը և, հավանաբար, նույն ժամանակ էլ վերադարձել է էջմիածին. գիտենք արդեն, որ «Կտակը» գրված է դրանից 18 տարի հետո, ուստի 1677 թ.։

---

4 Տե՛ս Մաշտոցյան Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1 բ, վավ. 104 և 105։

Այս ավյալը հաստատվում է նաև ականատես մեր առկա կենսագրական բնույթի մի քանի ակնարկներով։

Ասել ենք արդեն, որ Հակոբ Ջուղայեցուն հայոցվել է Վաղարշապատ գյուղը (որի մոտը Թահմազ-գուլի խանի Թուրքերի կողմն անցնելուց հետո, արդեն տանուտեր (ռաիսի), արվում էր Երևանի իրար հաջորդող 5 խաների)՝ շահական հրովարտակով կրկին գարձնել էջմիածնի աթոռի վակֆային կալվածը։ Այս կապակցությամբ նա գրում է. «Իսկ այժմս (այսինքն՝ «ականատես գրության ժամանակ) 6 (5) խան է նստեալ, շնորհօք սուրբ հոգւոյն հաստատ է (Վաղարշապատ գյուղը) սուրբ աթոռոյնս։ Եվ. իրոք, այդ տարիներին՝ այսինքն 1659—1677 թթ. միջոցին, Երևանում իշխել են հետևյալ 5 խաները՝ 1) Նազաֆ-գուլի. որ խան է եղել մինչև 1663 թ.,

2) Արաս-գուլի՝ 1663—1666 թթ.,
3) Ալխաս-Միրզա (Սեֆի-գուլի)՝ 1666—1674 թթ.,
4) Սարուխան-բէկ (ժամանակավոր պաշտոնակատար)՝ 1674—1675 թթ.,
5) Ռուստամ խանի որդի Սեֆի-գուլի խան՝ 1675-ի հոյեմբեր ամսից[5]։

Մի այլ կապակցությամբ Հակոբ Ջուղայեցին հայտնում է, որ «ահեմարմին սատանայքն մտին Լահաթափոի (Երևանի նահանգի) սեազուխքն և իւրեանքն եղեն մարմնաւոր սատանայ Երևանայ խանէրին, որ այնքան վիշտ և նեղութիւն կրեցամ ի սեռաց Բ. (2) խանելոնին»։

Այս երկու խաներից մեկը, անտարակույս, Ալխաս-Միրզան է. Հակոբ կաթողիկոսի անձնական թշնամին[6], իսկ մյուսը՝ Սեֆի-գուլի խանը, որը էջմիածնի պարտքերի վրա նոր պարտքեր էր կուտակել և, երկյուղ կրելով կաթողիկոսից, որ կարող էր գնալ Սպահան ու բացահայտել խանի ապօրինի գործերը, արգելափակել էր նրան Երևանում։ 1677 թ. հունիսի 1-ին[7] նա տատանց գիտելոյ խանին՝ նստեալ գնաց ի Տփխիս քաղաք Վրաց. թերևս կարասցէ մոգովն զգրամս, զի օգնութիւն լիցի պարտուցեալս[8]։ Ահա հենց այս օրերին էլ, երբ, իր իսկ խոսքերով, Ջուղայեցին «կիսամեռ հասակաւ շրջում էր տերկրէ ի յերկիր և գոռէ ի գուռն... իբր մուրացիկ»— գրված պետք է լինի մեզ հետաքրքրող փաստաթուղթը. հավանաբար՝ հենց Տփխիս քաղաքում։

Հակոբ Ջուղայեցու «Կնատեր» արժեքավոր է ոչ միայն Մայր աթոռի անհնական հիմքերն ամրապնդելու հեռանկարով մշակված վարչական բարեռեորգումների ծրագրով և XVII դարի քաղաքական ու եկեղեցական անցուդարձերի մասին ուշագրավ տեղեկություններով։ Այս նոր ակգրեագրյուրն իր նպատակն է բերում նաև հայ պատմագրության պատմությանը։ Պարզվում է, որ Ջուղայեցին ունեցել է նաև «Կաթողիկոսաց պատմութիւն» կոչվող մի աշխատություն, որի մեջ շարադրել է ոչ ավելի վաղ շրջանների, ապա, անտարակույս, իր ապրած ժամանակի հայ եկեղեցու բեգարձակ պատմությունը։

Սահակ կաթողիկոսի գործունեության գրվածները պատմելիս նա գրում է. «Շատն ասացեալ էր խոնարհ նազարին, և նա տուեալ զպատասխանին, որպէս որ գրեալ եմ ի մէջ Կաթողիկոսաց պատմութեանն», և այնուհետև՝ «Անդ (յերկիրն Օռմանեցոց) նս ոչ զգազարեաց վատաշվէրն (Սահակ) իւր խարդախութենէն, որպես գրեալ եմ լիապէս առաջ ճառս ի Պատմութիւն կաթուղիկոսացքն»։ Նույն աշխատության մասին մեկ անգամ էլ ակնարկ է անում Մովսես կաթողիկոսի մասին խոսելիս. «Նորոգեաց սուրբ աթոռն (Մովսէս) ի յամենայն գիմաց, որպես գրեալ կա ի պատմութիւնն»։

Հակոբ Ջուղայեցու գրած «Պատմության» մասին վկայություն ունի նաև Երեմիա Քյոմուրճյանը, բազմավաստակ կաթողիկոսի մահվան առիթով հյուսած իր «Ողբի» մեջ, ուր կան այսպիսի տողեր.

«Պատմութիւնս գրեցեր,
Տիշատակ մեզ թողեր՝
Զգանգատաց աշխարհի ծանուցեր»[9]։

---

5 Այս տվյալները հիմնականում քաղում ենք Զաքարիա Ագուլեցու առուգապատում «Օրագրություններից» (Երևան, 1998)։

6 Նաև Ն կաթողիկոսի լարված հարաբերությունների ու թշնամանքի մասին պերճախոս տվյալներ են գրանցված Զաքարիա Քանաքեռցու Պատմության մեջ (տե՛ս «Զաքարիա Սարկավագի Պատմագրութիւն», հատ. երկրորդ, 1870, էջ 77 և հտ.)։

7 Զաքարիա Ագուլեցի, էջ 128։

8 Զաքարիա Քանաքեռցի, հատ. Բ, էջ 91։

9 Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 220։

Զուգայեցու «Տնտեսը» արժեքավոր է նաև իր լեզվով, որ ժամանակի խոսակցական լեզուն է՝ գրաբարախառն աշխարհաբար։ Նա, օրինակ, գրում է. «Եթէ իմ կամս այլ լեզի՝ գալը բանագա- [illegible] զիս. ապրին բանի մի զառուշի մայր գծեր, որ ասվոր աթառը մնացական եղեր. [illegible] կայից ժամանակաց լինի ագուս. ով գիտէ գինչ լինելոց է. և այս բառամ խոսքս և այլն. և [illegible] բառագիրք)։

Զուգայեցու լեզուն խառն է թուրքերեն ու պարսկերեն բառ-արտահայտություններով՝ [illegible], զաղալայ, ինարայ, փախմ, ոսզամ, ափինլ, արզուհալ, զաթար, [illegible], խարճ, գեյար, [illegible] չանար, զառ, խզրար, հասդ և այլն. օրենք, սահման. հաշվեկալի են ու անհարգատ բացատրու- [illegible]

* * *

Սույն հրապարակում ենք Հակոբ Զուգայեցու «Տնտեսը» հենց այնպես, ինչպես ընդօրինակ-ված է Երուսաղեմի մատենադարանի № 2864 ձեռագրում, որ ըստ հնագրական ավելակների XVII դարի վերջերի կամ XVIII-ի սկզբների արտագրություն է (հիշատակարան չունի)։ Լուսանց-ներում նշում ենք ձեռագրի էջահամարները։

[ԿՏԱԿ ՅԱԿՈԲԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՋՈՒՂԱՅԵՑԻՈՅ]

1 [Յիսուսի] Քրիստոսի նուաստ ծառայ Յակոբ կաթողիկոս Ամենայն Հայոց և փոխանորդ սուրբ առաքելոցն Բարդուղիմէոսի և Թադէոսի, և աթոռակալ սրբոյն Գրիգորի Հայաստանեայց լուսաւորչի, և վերադիտող Վաղարշապատու աստուածաէջ սուրբ տեղոյն իջման բանին աստուծոյ, և խնամիչ սուրբ աթոռոյն տառապեալ ազգիս, յորմէ հասցէ դիր օրհնութեան և նամակ պահպանութեան, չնորհք առաքելական և աստուածային բազմապատիկ օրհնութիւնն ի վերայ բոլոր և տառապեալ ազգիս, որ մեղաց հողմով ցիր և ցան եղեալ են ընդ ոլոր[տ]ս տիեզերաց։

Այլ և զեկուցումն լիցի լուսաւորեալ շարշարանօք սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին լուսածնունդ զաւակաց մօրն լուսոյ սուրբ Էջմիածնայ հոգևոր և սիրելի որդիք իմ՝ եպիսկոպոսք և վարդապետք, վանականք և
2 անա//պատաւորք, քահանայք և եկեղեցւոյ աստիճանաւորք, իշխանաշուք տօլվաթաւորք և երեսփոխանք, քալանթար և մելիք, տանուտեարք և, առհասարակ, աստուածասէր ժողովուրդք, զի որպէս մարմինն է կառավարիչ հոգւոյն և հոգին մարմնոյն կատարէ զկամս աստուծոյ և թողութիւն մեղաց և զկատարումն ամենայն բարեգործութեանց, նոյնպէս է հոգևորական գործ և եկեղեցական կարգ և սահման՝ մարմնաւոր իշխանութեամբ յառաջանայ։ Ոչ միայն քրիստոնէից է այս, այլազգեաց և կռապաշտիցն ևս էր, զի այնքան նահատակք, որ վասն սիրոյն Քրիստոսի նահատակեցան, կռապաշտք թագաւորքն վասն իւրեանց օրինացն խափանման վրէժխնդիր եղեն։ Իսկ մերոյս տառապեալ ազգիս Գ. (3) անգամ կանգնեալ և անկեալ է թագաւորութիւնն նախ՝ Արշակունեաց թագաւորութիւնն, որ ԳՃ. (300) ամաւ յառաջ էր, քան զգալուստն փրկչին մերոյ. ի ժամանակս կռապաշտութեանն բազում քաջութիւն և յաղթութիւն և երևելի գործ ցուցին, և այլ այլազգ թագաւորք հարկատու արարին։ Իսկ յորժամ եկն լոյս աշխարհս տէրն մեր Քրիստոս և աստուածամանաւք եղեն, ի մէջ Արշակուն[ե]աց թագաւորաց փոքր ինչ նշոյլ Արդար թագաւորիցն երևեցաւ, իսկ կատարելապէսն՝ սուրբն Տրդատ, որ քրիստոսական հաւատովն փայլէր իբրև
3 զա//րեգակն, իսկ այլքն ոչ արարին այնպէս գործ, որ յիշելոյ և գրելոյ լինին արժան։ Եւ յորժամ անկաւ թագաւորութիւնն Արշակունեաց՝ սպարապետօք և մարզպանօք վարեցին զիշխանութիւնն իւրեանց, խրատով հայրապետացն առնէին ԳՃԼԶ. (331) ամ, մինչ թագաւորեաց մեծն Աշոտ Բագրատունին։

Իսկ Բագրատունիքն ի հրէիցն են բերեալ երկիրս Հայոց. ի ժամանակս թագաւորացն հրէից երբեմն հարկս տային բարիլացւոցն և երբեմն ոչ։ Քանիցս անգամ եկին բարիլացիքն ի վերայ հրէից և ոչ կարացին ըստ իւրեանց ախորժակացն առնուլ վրէժ։ Բարիլացիքն յոգնութիւն խնդրեցին յազգէս հայոց՝ գնալ ընդ բարիլացւոցն երկիրն Հրէաստանի, որ է Երու-

սաղէմ[10] և իւր շրջակայսն, այն պայմանով եղին ուխտ, զի գերիքն Հայոց լիցի, ոսկի և արծաթն՝ բարիլացուց։ Թագաւորն Հայոց գլուխ զօրացն կացոյց և սպարապետ Բագարատն, և բազում զօրօք գնացին երկիրն Հրէաստանի, և դարձան մեծաւ յաղթութեամբ։ Եւ բերեալ Բագարատ Մի. (200,000) գերի, և բնակեցուցին ի յԱնի և իւր շրջակայքն, և եղէն թագաւոր թագաւորացն Արշակունաց։ Իսկ զկնի՝ ՅԼԶ. թուին (Հայոց—887 թ.) թագաւորեաց Աշոտ Բագրատունին, զկնի որդի նորա Սմբատ, և որդի նորա Աշոտն՝ կարգաւ մինչ ի Ժ. (10) թագաւոր Բագրատունաց նստաւ ի յԱնի։
4 Եւ ոչ էին սոքա նման թագաւորացն // Արշակունաց. բազում բարեգործութիւն յաւելին ազգիս Հայոց, և բազում վանորայք և անապատք հաստատեցին, և բազում եկեղեցիս կառուցին. յիշատակ նոցա օրհնութեամբ եղիցի, և տէր թողցէ զյանցանս նոցա։ Որպէս ի գիրս պատմութեանց գրեալ է ոչ էր պակաս տուն հայրապետանոցի, քան զտուն թագաւորացն, զի ունէր Շ. (500) գեղ մեծանիստ և Շ. (500) հեծելազօրս, ԼԳ. (33) եպիսկոպոսք և գիտնական վարդապետք, [որ միշտ կային ի ծառայութիւն հայրապետին][11]։ Վասն միջասահման գոլոյն սուրբ էջմիածնայ և էր անմարդաբնակ, զի պարսիկ[ք] զԹօփրախղալայս[12] ունէին և հայք զԱնբերդ, կէս աւուր ճանապարհ է հեռի միմեանց։

Իսկ ի բառնալ թագաւորացն Բագրատունացն ի յԱնոյ, որ ՃԾ. (150 ամ) վարեցին զթագաւորութիւնն՝ յերկիրն Կիլիկոյ Ռուբենիքն ունէին մասն ինչ յերկրէն՝ բերթ և գեղորայք։ Սոքա սերեալք էին յազգէն Յարշակունաց և Բագրատունէից, ՃԾ. (150) ամ իշխանութեամբ կային, մինչև Լ մեծն Լեւոն, որ թագաւորեաց և տիրեաց բոլոր տանն Կիլիկոյ։ Եւ աթոռ թագաւորութեանն էր ի Սիս, մինչ ՃՀԸ. (178) ամ թագաւորեցին ի Սիս։ Ի յայն ժամանակն ոչ էր Մսրր ի ձեռն օսմանցոց, այլ յատուկ թագաւոր գոյր, որ սուլթան ասէին։ Մսրա սուլթանն բազում նաւօք յանկարծակի եկն ի վերայ մեր թագաւորին և մերայինքն էին անպատրաստ. ձերբակալ
5 արար//զթագաւորն, և զերկիրն քանդեալ և գերէվարեաց, և բարձաւ թագաւորութիւնն։ Սոքա ես էին բարէբարոյ քրիստոսասէրք և երկիւղած յաստուծոյ, յիշատակ նոցա օրհնութեամբ եղիցի, տէր թողցէ զյանցանս նոցա։ Իսկ ի բառնալ թագաւորութեան մերոյ ի Սըսայ, զկնի ԽԵ. (45) ամի, օսմանցիքն առին Իստամպօլ։

Իսկ ի բառնալն թագաւորութեան Հայոց, այնուհետև ուր գոյր մեծ իշխան՝ անդ մնար կաթողիկոսն, մինչ որ յամենայն տեղիս տիրեցին մահմետականք։ Եւ վարդապետն Թումայ Մեծոփեցին արար ժողով եպիսկոպոսաց, վարդապետաց և գիտնական արանց. նորոգեցին սուրբ աթոռն, և անդ նստաւ կաթողիկոսն ի ներքոյ իշխանութեան տաճկաց, երբեմն հեռութեամբ, երբեմն նեղութեամբ, երբեմն հարստութեամբ, և երբեմն պղրատութեամբ, և այսպէս՝ փոփոխմամբ անցուցեալ են։ Իսկ կաթողիկոսքն՝ ոմանք գիտունք և ոմանք անգէտք, մինչ ի յետին ժամանակս, որ մեք աչօք տեսաք՝ Դաւիթն և Մելքիսեթն՝ այր ազէտք և անտեղեակ ի սուրբ գրոց։ Բազում ժամանակ էր, որ երկուքն ի միասին վարէին զկաթողիկոսութիւնն,

10 Ձեռագրում՝ «Երուսաղէմայ»։
11 Փակագծերի մեջ առված հատվածը գրված է լուսանցքում։
12 Ձեռագրում՝ «զԹօփրախղալանայն»։

և յետոյ Մելքիսեթն Ճ. (100) թուման ղարալայ եդ|ին ի վերայ սուրբ էջ-
միածնայ, որ և իմարայ ես ասեն, որ ինքն միայն իշխեսցէ կաթողիկոսու-
թեանն։ Քանի մի ամ ետ Ճ. (100) թուման, և յետոյ ոչ կարացեալ տալ՝
6 եմուտ || Օսմանցոց երկիրն, և անտուստ ի Լէհ, և անդ էառ զրաւ կենաց
իւրոց։

Իսկ զկնի վաղջանի Մելքիսեթ կաթողիկոսին եղբօրորդի կայր՝ Սահակ
եպիսկոպոս, գնաց առ թագաւորն Շահ-Ապաս, թէ տուր ինձ զտեղի հօրեղ-
բօրն իմոյ, և ես վճարեցից զպարտքն, նոյնպէս ամէն տարոյ զՃ. (100)
թուման[ն], էառ թագաւորէն հրաման և ըստ իւր արժանեացն նմանիցն եղև
ձեռնադրե[ա]լ[13]։ Տարի մի ի Սպահան մնաց և ոչ ումեք գտաւ օգնութիւն.
զի ամենեքեան պատճառեցին, թէ մեր մեծ եղբարքն ջուղայեցիք են, և
յերբ նոքա քեզ ընդունեն, մեք ես քեզ ձեռնտու լինինք, թէպէտ թագաւորին
զեկուց, թէ խօճայ Նազարն և այլ ջուղայեցիքն զիս չեն ընդունել, շահն
ասացեալ էր խօճայ Նազարին, և նա տուեալ զպատասխանին՝ որպէս որ
գրեալ եմ ի մէջ Կաթողիկոսաց պատմութեանն։ Եւ ոչ այնու գտաւ իւր
անկարգ արարմանց դեղ, եկն երկիրս Հայաստանեայց տարի և երկու այսր
և անդր, և ոչ այնու գտաւ հնար. զինչ որ ժողովէր՝ իւրայոց և թագաւորի
ծառայիցն լինէր կարեացն բաւական։ Հարցեալ էր գիտուն արանց, թէ
որով հնարիւք կարեմ զերծանիլ ի ձեռաց ծառայից թագաւորին, և նոքա
ասացեալ են՝ որպէս արար հօրեղբայրն քո։ Ըստ նոցա խրատուն խոյս
7 ետ||և եմուտ Օսմանցոց երկիրն։ Անդ ես ոչ դադարեաց վատաշվէրն իւր
խարդախութենէն, որպէս գրեալ եմ լիապէս արարք նորա ի Պատմութիւն
կաթողիկոսացն, ոչ լսելով զոլվաթաւորացն, մինչ եղև ի Քրիստոսի սեե-
րես և ուրացող հաւատոյն։

Մինչ ի վախճան Շահ-Ապասին է. (7) տարոյ հարկն մնացեալ կայր
ի վերայ սուրբ աթոռոյն։ Իսկ երջանիկ սուրբ հայրն մեր Մովսես հոգևոր
տէրն բազում աշխատութեամբ և միջնորդութեամբ Ջուղայոյ և Երևանայ
զոլվաթաւորացն և սուրբ լուսաւորչին աղօթ[իւ]քն ողորմածն աստուած
քաղցրացոյց զսիրտ Շահ-Սօֆի թագաւորին, էանց մնացեալ հարկին և
խափանեաց զեղեալ Ճ. (100) թուման Մելքիսեթին։ Եւ նորոգեաց սուրբ
աթոռն ի յամենայն դիմաց, որպէս գրեալ կա ի պատմութիւնն. եթէ հոգևոր
կարգօք՝ վարդապետօք, դպրատանօք և աշակերտեալ մանկտօք, սուրբ
եկեղեցուն բազմազգուն զարդիւք և սրբութեան անօթիւք, նոյնպէս մար-
մնաւորօք՝ ընչիւք և ապրանօք, վարօք և վաստակօք։ Ի յառաջին տգէտ
կաթողիկոսաց և ոչ մի ինչ է մնացեալ, սուրբ սեղանն փոքր է եղեալ և ոչ
ըստ պատշաճին և արժանուն։ Ի յօրհնել զսեղանն ոչ է եղեալ խաչ մի ի
սուրբ աթոռն, որ ի ձեռն առնու և օրհնէ զսեղանն, այլ ի յիւր վզի սուրբ
նշանն է Մովսէս հոգևոր տէրն ձեռին առեալ և օրհնեալ զսեղանն։
8 Եւ մեղապարտս || յորժամ եկն ի սուրբ աթոռն՝ Ա. փոքր գեղի չափով
անօթ չկայր ի սուրբ աթոռն, զայս ամենայն վասն չքաւորութեան և աղքատ
մնացեալ ի յառաջին նստող կաթողիկոսացն գրեցի, նոյնպէս և մլքի կող-
մանէ՝ հողի և վաստակից ոչ ինչ կայր և ոչ դրամ մի։

Իսկ զկնի տեառն Մովսիսի զինչ կիսակատար կայր ի շինուածոյ, եթէ
եկեղեցւոյն և թէ այլ շինուածք կայր՝ Փիլիպպոս հոգևոր տէրն ի կատար

13 Լուսանցքում ավելացված է. «Եւ ոմանք ասեն, թէ ի Հօրեղբօրէն եղև ձեռնադրեալ»

հասոյց, եթէ հոգևոր պակասութիւն և թէ մարմնաւոր, զամենայն ելից
զթերին։ Սուրբ աջն լուսաւորչին, որ Շահ-Ապասն տարեալ էր Սպահան,
սուրբ աջն խնդրեալ ի թագաւորէն և գարձոյց ի սուրբ աթոռն։ Սուրբ աթո-
ռոյն զինչ վաստակ որ կայր՝ ոչ էր ապատ, նոյնպէս տեառն Փիլիպպոսի
արարեալ ազատ ի հարկից դռան թագաւորին։

Եւ յորժամ Շահ-Սօֆի թագաւորն եկն ի վերայ Երևանայ բերդին, Յօ-
շականայ մլքին[14] Ռ. (2) դանկ և կէս ծախեալ էին տեառն Փիլիպպոսին
և դանկ ու կէսն դրաւ եդեալ, ի ժամանակս տեառն Փիլիպպոսի Աղչուց
վանուց մուլքն ես էի գնեալ, Յոփանիսոյ մուլքն և Սօլաքայ Դ. (3) դանկն,
զի մլքի կատարեալն Զ. (6) դանդ է, Յօշականայ գրաւն և մնացեալն այլ
գնեցի։ Թէ Փիլիպպոս հոգևոր տիրի գնեալն, թէ մեր գնեալն տարէն Բճ.
9 (200) զուռուշ ի նոցանէ վաստակ // լինէր սուրբ աթոռին։

Իսկ զկնի վախճանի տեառն Փիլիպպոսի ժողովեցի զվարդապետքն և
զմիաբանս և ասացի. Եղբարք և սիրելի որդիք իմ, Փիլիպպոս հոգևոր տի-
րին ձեռն այսքան դրամ եկն և գնաց, և այնքան դրամիցն քանի մի մուլք
գնեցաք, որ տարին քանի մի թուման սուրբ աթոռոյս վաստակ է գալիս.
դարձեալ, սիրելի որդիք, տարին այսքան խարճ է գնում սուրբ աթոռիս, եթէ
այլազգաց, եթէ միաբանից, և եթէ եկող-գնացողաց։ Եթէ իմ կամք այլ
չեղնի՝ դուք բռնադատեցեք զիս, տարին քանի մի զուռուշի մուլք գնենք,
որ սուրբ աթոռոյս մնացական եղնի, յետակայից ժամանակաց լիցի օգուտ,
ո՞վ գիտե զինչ լինելոց է, և այլ բազում խօսք։

Հոգևոր սիրելի որդիք, մեղապարտս զինչ գրեմ վասն իմ, հրամայէ
Սողոմոն. «Գովեսցէ զքեզ ընկերն և մի քո բերան, օտարն և մի քո շըր-
թունն»։ Սիրելիք, եթէ գովելոյ և պարծանաց սակէ գրեմ զարարս, տէր
Քրիստոս հատեալ է վճիռն, թէ. «Այն իսկ է վարձք նոցա», իսկ եթէ սուտ
գրեմ, նոյնպէս տէրն մեր Քրիստոս հրամայեաց. «Որ սուտ խօսի, յիւրմէ
անտի խոսի, զի հայր նորա սատանայ է»։ Զի թէ սուտ խօսողն որդի սա-
տանայի է, իսկ որք սուտն թղթին արձանացուցանեն որքա՞ն պակաս են
10 քան որդի սատանային։ Իսկ թէ վասն // օգտի սուրբ աթոռոյն և յետակա-
յից բարի օրինակ լինելոյ, որ ամէնքն ըստ իւրեանց չափոյն ջանան, թեր-
ևս նոքա ևս յաւելուն ինչք սուրբ աթոռոյն օգուտք։ Իսկ գրելս ոչ է ինձ
մեղք, գովեստ և պարծանք, այլ բարի օրինակ յետակայիցն, և օգուտ սուրբ
աթոռոյն, և մեղապարտիս յիշատակ բարի առաջի տեառն մերոյ Քրիս-
տոսի վասն ջանացս իջման իւրոյ տեղւոյն։ Սիրելի որդիք, մի լիցի յաճախ
գրելս ձեզ լսելն ձանձրութիւն, զի թէ կարճառօտ գրեմ ոչ լինի պարզա-
պէս իմացումն, վասն այն գրեմ փոքր ինչ յաճախ։

Հոգևոր որդիք, բազում ժամանակ էր, որ սուրբ Էջմիածնայ գեղի
մուլքն ի սուրբ Էջմիածնայ ելած էր, այլ յառաջ վախմ է եղած. ձեռաց ի
ձեռն անկանելով եկեալ է ի ձեռն Ամիրգունայ խանին, զկնի նորա ի ձեռն
որդւոյ իւրոյ Թամազ-զուլի խանին։ Եւ յերբ Թամազ-զուլի խանն գնաց ընդ
խոնթկարին, զինչս նորա թագաւորական տիրեցին, նոյնպէս և մուլքն
սուրբ Էջմիածնայ գեղին։ Եւ իմ ապաւինեալ աղօթք սուրբ Լուսաւորչին,
միջնորդ ունելով սուրբ զԱստուածածինն առ միածին որդին իւր, զի օգնես-
ցէ մեղապարտիս, գնացի ի տես թագաւորին՝ երկրորդ Շահ-Ապասին, յա-

[14] Լուսանցքում ավելացված է «Ի մեծ նեղութիւն էին անկեալ»։

ռաջ ի տեսութիւն իւր և մեր կաթողիկոս Նստելոյն, և նորոգեցաք բռաղամ
11 և սիկելն մեր։ Եւ զկնի այնորիկ ետու արդուհալ, թէ / էջմիածնայ գեղի մուլքն ժամանակաց-ժամանակ սուրբ էջմիածնայ վաղմ է, Ա. պատճառ ի մեր ձեռաց ելած է, ձեռաց ի ձեռն անկանելով ի ձեռն Ամիրգունայ խանին, անկաւ ի ձեռն որդւոյն՝ Թամազ-զուլի խանին. և յորժամ նա գնաց օսմանլուն, ձգեալ են ի բռ գաւթարն, խնդրեմք ի մեծութենէ քումէ սուրբ էջմիածնայ վաղմն այլվի շնորհես իրն։ Բ. (2) տարի բաղում աշխատութեամբ դեգերեցայ ի դրունս մեծամեծաց, մինչ տէր գթացաւ և քաղցրացոյց զսիրտ Բագաւորին, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին վերստին շնորհեայ սուրբ աթոռոյն, զի Ե. (5) խանի տօնլուխ ետ տուած դաւթարով՝ Քալպաալի խանին, Ճաղաթայ Մահմատ-զուլի խանին, Քէխոստրով խանին, Լալայ-բէկի տղայ Մահմուտ-զուլի խանին, և Նուջաֆ-զուլի խանին։ Ի դաւթարացն դուրս ձգել ետու և սուրբ էջմիածնայ վերայ հաստատեսցի։ Իսկ այժմս Ե. (5) խան է նստեալ, շնորհօք սուրբ հոգւոյն հաստատ է ի վերայ սուրբ աթոռոյն։

Դարձեալ ծանիր սիրելի որդիք, բաղում աղաչանօք, խրատով և քարոզելով եմ ճարեալ ի բաղմաց, աստուած ձեզ յաջողումն պարգևէ և ձեր ծնօղաց հոգին լուսաւորէ, և Երևանցի խօճայ Յակորջանին մեղացն թողութիւն շնորհէ և արքայութիւն պարգևէ, գեղի մուլք // և այգիք վախմ եմ
12 հաստատեալ սուրբ աթոռոյն, նոյնպէս և այլոց մուլք և այգիք եմ գնեալ։ բաղանիք եմ վախմ ճարեալ, դրամ բաղում եմ խարճեալ և ջուր բերեալ, որ այլեայլ անուն ասեն՝ հայոց լեղուաւն ահակուդայ, թուրքի լեղուաւն՝ քարեզ, իսկ պարսիցն՝ զանաթ. այն ջրոյն ներքևն ծովակ եմ արարեալ, ի նմանէ ևս քոյ վաստակ։

Զայսոսիկ վասն այն ծանուցանեմ սիրելի որդւոցս, զի ժամանակս դառնացեալ է և սէրն սպառեալ, տուրք և ողորմութիւն պակասեալ։ Զի յառաջն գրեցի, թէ Մովսէս հոգևոր տիրին ժամանակն մլքից զատ չգոյր, և Փիլիպպոս հոգևոր տիրի ժամանակն՝ փոքր ինչ։ Սիրելի որդիք, նոցա ժամանակն քաղցր էր, սէրն ոչ էր սպառեալ, տուրք և ողորմութիւն առատ էր։ Իսկ ժամանակս այն ժամանակին մասն չէ մնացեալ, զի որքան վերայ հայիմք, տարի քան զտարի, ըստ հաճոյիցն աստուծոյ գործ նուագում է, մարգարէն Եսայիաս և այլ մարգարէք գրեն. «Աչք ձեր ի հեռաստանէ տեսցին և զգուշացարուք յամենայնի»։ Հոգևոր որդիք, պարտիմք յամենայնի պատրաստ և զգաստ լինիմք, չարն սատանայ մեզ թշնամի է, որ յամենայն կողմանց կամի մեզ փորձութիւն յարուցանել, զի բարին խափանեսցէ և
13 զիւր չարին յառաջեցուսցէ. մեք ևս պարտիմք յամենայնի զգաստ // և զգոյշ լինել, զի մի իսպառ առ ոտն կոխան լինիմք։ Դարձեալ, սրբազան առաքեալն Պօղոս հրամայէ. «Նախանձեցարուք շնորհացն, որ լաւն են», զի թէպէտ մեք յետին աղքատութիւնն եմք հասեալ, պարտիմք գիտնոց և իւ՛աստնոց կարգ և սահմանն նայիլ և ի նոցանէ ուսանիլ։ Զի փափն Հռոմայ, թէպէտ յամենայնի հրամայող է և ամենեքեան նմա հնազանդ և լսողք են, այլ ոչ ունի իշխանութիւն ի վերայ Պետրոսի առաքելոյ գանձին և գանձարանին, այլ է ի ձեռն երեսփոխանաց։ Նոյնպէս պարտիմք և մեք մեր աղքատութեամբն նոցա կարգաւորութենէն օրինակ առնումք, թերևս գթասցի տէր, բարի կարգ և սահման հաստատեսցի ի մէջ տառապեալ ազգիս։ Գիտեմ, զի ոմանք այլ և այլ ընդ վայր խօսին, ասելով, թէ Մովսէս և

Փիլիպպոս հոգևոր տէրքն դայս ոչ սահմանեցին. բարւոք բարբառին ըստ իւրոց արժանուն. որպէս որ յառաջն գրեցի Մովսէս հոգևոր տիրի ժամանակն գատ չկայր նորա [և Փիլիպպոս հոգևոր տիրի ժամանակն Ժ. (10) թուման կայր-չկայր][15], նոքա ի՞նչ կարգ դնէին. իսկ այժմս, շնորհօք սուրբ հոգւոյն, բաղում է, հարկիւ պարտիմ կարգ և սահման հաստատել, օրհնութեամբ և անիծիւք փակել։

Հոգևոր որդիք, զայս ոչ եթէ նոր ասեմ, այլ ԺԸ. (18) տարաւ յառաջ
14 եմ ասացեալ ի Ջուղայոյ դոլվաթաւորացն, // եթէ սուրբ էջմիածնայ գէլուրի և դրամի հրամանն ի ձեռն սեագլխի եղնի, փոքր ինչ ժամանակաց յետոյ սուրբ աթոռն աւեր տեսէք. իսկ եթէ ի ձեռն դոլվաթաւոր երեսփոխանաց լինի սուրբ աթոռոյն դրամի հրամանն և գէլուրն՝ մինչ ի գալուստն Քրիստոսի հաստատ դիտասջիք։

Խնդրեմ ի ձէնջ, սիրելի որդիք և աչացս լոյս եպիսկոպոսք, վարդապետք, քահանայք և իշխանաշուք տոլվաթաւորք, մելիք և տանուտեարք, տէր առաջնորդէ, յերբ կաթողիկոս լինիք օրհնելոյ, յառաջ դայս ձեռագիրս և իղրարս խնդրեցէք. զինչ գէլուր, որ սուրբ աթոռոյն գայ, թէ նուիրակից, քարվանից, գանձանակից, խոստմանց և կամ ձեռնադրեալ եպիսկոպոսաց և այլ ինչ կողմանց որ լինի, Ե. (5) բաժնէն Ա. (1) կաթողիկոսին եղնի, և իմ ստացելոցս, թէ ճարուվի իցէ և կամ գնովի, վախմ դնողից և կամ Փիլիպպոս հոգևոր տիրի ժամանակէն մնացելոցն՝ տասանորդն լիցի կաթողիկոսին, ի կամս իւր լիցին, զինչ և կամի՝ եկեղեցի շինէ, կարմունջ կապէ, աղքատի տայ, և կամ կարօտելոցն բաշխէ, և թէ կամի՝ ի ջուրն ձգէ, ոչ ոք իշխանութիւն չունի գէլուրին հնգեակն, որ իւր ժամանակն կու գայ, նոյնպէս և մեր ճարեցելոց, գնեցելոց տասանորդին. հրամանն միայն կաթողիկոսին է, և ոչ այլ ումեք։ Իսկ մերոց մնացելոց ինն ախա-
15 րաթի // և գէլուրի մնացեալ չորսն, այն սուրբ աթոռոյն է։ Ուստից որ լինի ընտրեն լաւ մարդ, որ վկայեալ լինի նորա լաւութեան և ճշմարտասիրութեան, նոյնպէս դորձօքն պարկեշտ, ինքն համեստ և մարդաշահ, ի նորա ձեռն տան, և կարգաւորացն Ա. (1) նորա խոստովանահայր դնեն, և մի նմա դաւթար գրող դնեն, զի առանց դաւթարի առևտուր չեղնի։ Իսկ թէ կաթողիկոսն ի սուրբ աթոռն լինի, զինչ որ առնէ՝ գիտութեամբ կաթողիկոսին լինի, իսկ թէ կաթողիկոսն այլ տեղ լինի գնացեալ՝ գիտութեամբ աթոռակալին եղնի, զի ծածուկ բան չանէ։ Իսկ դրամին պահելն, աւելցնելն և շահեցուցանելն՝ ի ձեռն երեսփոխանին է, որպէս օրէն է աշխարհի զդրամն ամենքն կու ջանան յաւելցնել։

Դարձեալ, տարին Ա. անգամ կաթողիկոսն և իւր խորհրդականքն նստին և ընդ երեսփոխանին հսապ տեսանեն և գիտենան, թէ այս տարւոյս մուտն ինչ է և ելն ինչ է. ամենքն վերահասու եղնին և գրեն ի մեծ դաւթարն, բայց զինչ որ գայ, ուսկից որ լինի, Բ. (2) դաւթար եղնի՝ Ա. (1) առ երեսփոխանն և միւսն առ կաթողիկոսին յառաջական։ Եւ յորժամ հաշիվ տեսանեն, ճշմարիտն այն է՝ Բ. (2) ի միասին խօսին դաւթարքն։

Ջայս ես հարկ լիցի ի վերայ կաթողիկոսին, զինչ մեծ և գլխաւոր բան
16 և գործ // լինի՝ առանց ժողովի չանէ. եթէ մեծ գործ է՝ զամենայն երեսի

15 Փակագծի մեջ առած հատվածն ավելացված է լուսանցքում։
16 «Ինն»-ից հետո, այլ ձեռագրով գրված է՝ «և միս»։

առաջնորդք և գիտուն վարդապետք ժողովէ, եթէ միջակ գործ է՝ թղթով հեռակայիցն զեկուսցէ և մօտակայքն ժողովէ, զայն բանն գլխաւորէ։

Դարձեալ, զինչ սուրբ աթոռոյն հարկաւոր կարիք լինի՝ շինելոյն և կամ քակելոյ, զայն ևս առանց ժողովի չառնեն. և յերբ հարկաւոր լինի և ժողովեալքն հաւանին՝ սուրբ աթոռոյն գրամովն շինեն։

Դարձեալ, եթէ թշնամի յառնէ և կամ ոք չհնազանդի և ինքնագլուխ շարժի, զայն ևս ժողովով քննեն, զոր ինչ վճռի արժան է՝ միաբանութեամբ հրամայեն։

Եւ դպրատուն հաստատուն պահեն, նոյնպէս և զդասատուն, զի այն է օգուտ օրինաց և հաւատոյ և աայծառութիւն սուրբ եկեղեցւոյ։

Այլ և եկողաց և գնացողաց հարկիս և պատիւ ըստ իւրոց արժանուն. ըստ սրբոյն Պողոսի առաքելոյն. «Սէր հասարակաց է և պատիւ ըստ արժանոյն»։ Եւս առաւել դաս կամ քարող անպակաս լիցի ի միջոյ սուրբ եկեղեցւոյն, մանաւանդ յորժամ քարվան և աստուածասէր վաճառականքն գան, զի են ոմանք, որ ի ժամանակս կենաց իւրոց միանգամ հանդիպին ի սուրբ աթոռն։

Ծածկագիտին աստուծոյ է յայտ, զոր ինչ գրեցի՝ յառաջ ես առնելոց էի և ապա թղթով ձեզ պատ//ուիրելոց։ Ոչ թէ միայն ձեզ, այլ բոլոր աշխարհիս է յայտ, ԺԵ. (15) տարի է, որ գիշերն հանգիստ չունիմ և ցերեկն դադար, պատառն մատաշվէր սեագլուխք։ Է. (7) տարի էր ի տուն Հունաց Լի՝ նեղութեան միջի, վասն եղեալար վարդապետին ցանկ-պատառութեանն, և մեր անբարտաւան և թշնամի բարեկամաց արարմանցն, որ ոչ լսելով գիտուն և ճշմարտասէր արանց և խաղ[աղ]արար մարդկանց պարտքրն կուտակեալ են իրրև զլեառն, և զմեզ այսքան վշտի և նեղութեան մատնեալ։

Դարձեալ, հոգևոր որդիք, մեր ակնկալութիւնն այն էր, որ գայինք ի սուրբ աթոռն, փոքր ինչ հեշտութեամբ հանգստանայինք։ Անմարմին սատանայքն մտին Սահաթափոսի սեագլուխքն և իւրեանքն եղեն մարմնաւոր սատանայ Երևանայ խանէրին, որ այնքան վիշտ և նեղութիւն կրեցաք ի ձեռաց Բ. (2) խանէրին. Թող զ'վիշտն, այնքան պարտուց ներքոյ գրաւեցաք, և կիսամեռ հասակաւս երկրէ ի յերկիր և գոնէ ի դուռն շրջիմ իբր մուրացիկ, թերևս գթասցի տէրն բոլորից և աղատեսցէ ի պարտուցս, զի մի պարտական ի դերեզման մտից և տագնապով խղճի մտաց մաշեալ և հիւծեալ մնասցեմ։

18 Սիրելի որդիք, ի ժամանակս տեառն Մովսիսի և // Փիլիպպոսի կաթողիկոսին ոչ ինչ կողմանէ լութիւն չկայր և իրաց կողմանէ շինութիւն, այլ յամենայնի պակասութիւն և աւերակ։ Զինչ որ նոցա ժամանակն եկն՝ ի նորոգութիւն սուրբ եկեղեցւոյն, տանց շինութեանց և նորոգութեան եղեւ խարճ։ Իսկ մեղապարտս զինչ շինեցի և արարի՝ մեծ մասն պարտեօք էր։ Իսկ այժմս շնորհօք սուրբ հոգւոյն այնքան հարկաւոր բան չկայ շինելոյ, պարտիք զզրեալս հաստատուն պահէք, որ սուրբ աթոռոյդ զատ յաւելնուտէր մի արասցէ, եթէ նեղութիւն ինչ պատահի, առձեռն պատրաստ իրմի լինի, և կամ հարկաւոր շինութիւն լինի՝ ինձ նման պարտեօք չանեն, որ վիշտ և նեղութիւն կրեն։

Հոգևոր և սիրելի որդիք այ[ս] իմ կտակս է, որ հարկաւոր ձեզ պատուիրեցի. եթէ զդրեալս կատարէք, կատարեսցէ տէր զբարի խնդրուածս ձեր և պահպանեալ պահեսցէ զձեզ յամենայն վտանգէ յոգւոյ և մարմնոյ. եթէ զդրեալս հաստատէք, ակն ունիմ յաստուծոյ, որ սուրբ աթոռդ պայծառ և անկարօտ յամենայնի կու մնա, իսկ եթէ զդրեալս անտես առնէք և ոչ կատարէք, տէր մի լուիցէ ձեզ և ամենայն խնդիրք ձեր անընդունակ լիցի։ Զինչ պակասութիւն սուրբ աթոռոյն պատահի՝ դուք լինէք պարտական և ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ սևերես մնաք և անլսողացն
19 // պատժոյն պատժակից լինիք։ Կատարողք աղաչանաց և խնդրուածաց իմոց՝ օրհնին յաստուծոյ, իսկ անլսողքն և անհնազանդքն՝ դատապարտեալք մնասցեն արդարադատէն աստուծոյ։

Սիրելի և աչաց լոյս որդիք, ոչ եթէ դայս կտակս, աղաչանքս և պաղատանքս վասն միայն զկնի իմոյ կաթողիկոս նստողին դրեցի, այլ ամենայն ժամանակի կաթողիկոսաց։ Նախ դայս ձեռադիրս առնուն և ապա ձեռնադրեն, զի այժմս որ դուք կենդանի էք, ձեզ աղաչանօք օրհնութիւն և անէծք դրեցի, վասն հաստատ և անկարօտ մնալոյ սուրբ աթոռոյն. և դայն օրհնութիւնն և անէծքն յետակայից առաջնորդաց, վարդապետաց, քահանայից, կարդաւորաց և աշխարհականաց վերայ լիցի, զոր յառաջն յանուանէ դրեալ եմ։ Դարձեալ, զի որքան կենդանի եմ՝ զձեզ աղաչող եմ և առ տէր աստուած աղօթող և պաղատող, որ ըստ իւր հաճոյիցն տպաւորեսցէ ի սիրտս սիրելի որդոցս, իսկ զկնի վաղչանիս՝ միշտ բողոքող եմ առ միածին որդին, զի թէպէտ սևերես եմ յիւրմէ, այլ ինքն ողորմեսցի և դթասցի իւր իշման տեղոյն և ցաւակցողացն ամենայնի.

«ЗАВЕЩАНИЕ» КАТОЛИКОСА АКОПА ДЖУГАЕЦИ

Член-корр. АН Арм. ССР Л. С. ХАЧИКЯН

(Резюме)

«Завещание» видного церковно-политического деятеля XVII в., католикоса всех армян Акопа Джугаеци (1655—1680) является одним из неизданных первоисточников, скопированных с рукописей Иерусалимского армянского патриархата во время научной командировки автора в Иерусалим (январь—март 1966 г.).

«Завещание» написано, вероятно, во второй половине 1677 г., когда А. Джугаеци, спасаясь от преследований ереванского хана, бежал в Грузию. В нем Джугаеци сообщает ряд сведений об экономическом и политическом положении армянской церкви, начиная с первого десятилетия XVII в. Он приводит важные данные о монастырском хозяйстве Эчмиадзина, о строительных работах, произведенных им и его предшественником, католикосом Филиппосом. В целях упрочения армянского католикосата он предлагает провести реформу управления монастырским хозяйством и распределения доходов всеармянского духовного центра, ограничить права католикоса, предоставив ему право распоряжаться лишь одной десятой частью доходов с монастырских имений и одной пятой—с иных поступлений (сборы с подвластных епархий, пожертвования и т. п.). Остальная, большая часть доходов должна считаться неотъемлемым достоянием католикосата. Распоряжаться им, согласно «Завещанию», будет специально созда-

ваемый с этой целью орган — коллегия компетентных, надежных людей, руководимая богатым светским человеком — «довлатвором», пользующимся хорошей репутацией и всеобщим уважением. Члены этого нового института должны были заботиться об укреплении монастырского хозяйства, приобретении новых имений, оказывать необходимую поддержку духовной семинарии и т. д.

«Завещание» католикоса Акопа Джугаеци представляет собой важный первоисточник, содержащий интересные сведения о социально-экономической жизни Армении XVII в. и новые данные о социально-политических воззрениях самого католикоса.